ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
12 մարտի 2026 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 57 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սարգիս Մադաթյանը, Սուրեն Գրիգորյանը և Լևոն Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արփենիկ Մուրադյանը, Սոնա Թևանյանը և Արման Լազրյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետ Արմեն Առաքելյանը, տրանսպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Հայկ Էվոյանը, ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը, կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը և հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը առաջարկեց, որ Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2026 թվականի ապրիլի 21-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հակոբյանն իր դիմումի համաձայն դադարեցրել է ավագանու անդամի իր լիազորությունները:

Համաձայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի մարտի 11-ի հ.23 արձանագրության՝ ավագանու անդամի մանդատը տրվել է Մայր Հայաստան կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Սարգիս Տեր-Եսայանին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2026 թվականի մարտի 12-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
3. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
4. Ծառայողական ավտոկայանատեղիներ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
5. «Երևանի հ.65 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ստեղծման և կանոնադրության հաստատման մասին: (Զեկուցվող)
6. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
7. Երևան համայնքի սեփականության 2025 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: (Զեկուցվող)
8. Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին: (Զեկուցվող)
9. Ծ. Իսակովի պողոտայի հ.15/31 հասցեում գտնվող՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Արա և Ռոբերտ Խաչատրյաններին պատկանող հողամասը Լեռ Կամսարի փողոցի հ.30/3 հասցեին կից հատվածում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
10. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.29/3 հասցեում հասարակական նշանակության շինության՝ ամբուլատոր պոլիկլինիկայի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
11. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շերամի փողոց հ.62 հասցեում բազմաֆունկցիոնալ նշանակության շինության կառուցման նախատեսվող

գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հրազդանի կիրճ հ.4/9 հասցեում սպորտային համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
13. Երևանի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
14. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 482-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
15. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N482-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
16. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
17. Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին: (Չզեկուցվող)
18. Միսաք Մանուշյանի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
19. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Չզեկուցվող)
20. Երևան քաղաքում Խաչատուր Ավետիսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
21. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
22. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
23. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Զեկուցվող)

Երևանի քաղաքապետ Տ. Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2026 թվականի մարտի 12-ի նիստի օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 15-րդ «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N482-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Երևանի քաղաքապետ Տ. Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2026 թվականի մարտի 12-ի նիստի օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 16-րդ «Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N718-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ առկա չէ ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Տ. Ավինյանը հայտնեց, որ օրակարգի նախագծից հանում է վերոնշյալ իրավական ակտերի նախագծերը:

Երևանի քաղաքապետ Տ. Ավինյանը տեղեկացրեց, որ չզեկուցվող՝ 3-րդ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագիծը հանում է օրակարգի նախագծից:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Իոսիֆ Կուբատյանը և առաջարկեց չզեկուցվող՝ 13-րդ «Երևանի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկության դրվեց օրակարգի չզեկուցվող 13-րդ՝ «Երևանի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան դարձնելու առաջարկը:

Կողմ՝ 34, դեմ՝ 20, ձեռնպահ՝ 4

Առաջարկն ընդունվեց:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն առաջարկեց օրակարգի նախագծի չզեկուցվող՝ 12-րդ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հրազդանի կիրճ հ. 4/9 հասցեում սպորտային համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» և 17-րդ՝ «Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկության դրվեց օրակարգի չզեկուցվող 12-րդ՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հրազդանի կիրճ հ. 4/9 հասցեում սպորտային համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան դարձնելու առաջարկը:

Կողմ՝ 28, դեմ՝ 29, ձեռնպահ՝ 0

Առաջարկը չընդունվեց:

Քվեարկության դրվեց օրակարգի չզեկուցվող 17-րդ՝ «Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան դարձնելու առաջարկը:

Կողմ՝ 28, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 1

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2026 թվականի մարտի 12-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 20 հարց, որից՝ 2-16-րդ հարցերը չզեկուցվող են:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2026 թվականի մարտի 12-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1.Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
3. Ծառայողական ավտոկայանատեղիներ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
4. «Երևանի հ.65 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ստեղծման և կանոնադրության հաստատման մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
6. Երևան համայնքի սեփականության 2025 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
7. Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
8. Ծ. Իսակովի պողոտայի հ.15/31 հասցեում գտնվող՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Արա և Ռոբերտ Խաչատրյաններին պատկանող հողամասը Լեռ Կամսարի փողոցի հ.30/3 հասցեին կից հատվածում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.29/3 հասցեում հասարակական նշանակության շինության՝ ամբուլատոր պոլիկլինիկայի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շերամի փողոց հ.62 հասցեում բազմաֆունկցիոնալ նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
11. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հրազդանի կիրճ հ. 4/9 հասցեում սպորտային համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 482-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
13. Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին: (Չզեկուցվող)

14. Միսաք Մանուշյանի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
15. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Չզեկուցվող)
16. Երևան քաղաքում Խաչատուր Ավետիսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
17. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
18. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
19. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Զեկուցվող)
20. Երևանի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 19

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 16-րդ հարցերը:

2. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպություններին՝ 2026 թվականի ընթացքում շարունակել հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

3. Ծառայողական ավտոկայանատեղիներ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ-1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպություններին՝ 2026 թվականի ընթացքում կազմակերպել հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով ծառայողական ավտոկա-յանատեղեր:

4. «Երևանի հ.65 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ստեղծման և կանոնադրության հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հիմնադրման միջոցով ստեղծել «Երևանի հ.65 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ Կազմակերպություն):

2. Սահմանել, որ Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումը նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու կամ նախադպրոցական ծառայություններ մատուցելու միջոցով:

2) յուրաքանչյուր սանի տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումը:

3. Կազմակերպությանը թույլատրել իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

1) լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում.

2) մարզաառողջարարական ծառայությունների կազմակերպում.

3) զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական, շտկողական ծառայությունների կազմակերպում, իսկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով՝ միայն լիցենզավորման հիման վրա:

4. Սահմանել, որ կազմակերպությանն անորոշ ժամկետով և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է Երևանի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 5-րդ փողոց 2/2 հասցեում գտնվող 1216.75 քմ շենքը և 0.251861 հա հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18102024-01-0265 վկայական):

5. Հաստատել «Երևանի հ.65 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

5. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N463-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2) հողամասերի կամ դրանց առանձին հատվածների (մասերի) աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հաշվարկվում է հիմք ընդունելով դրանց գնահատված շուկայական արժեքը՝ կառավարության սահմանած կարգով:».

2) Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 5-րդ կետից հետո լրացնել նոր 5.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Երևան քաղաքի ավագանու և Երևանի քաղաքապետի կողմից օրենքով, սույն կարգով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով չնախատեսված դեպքերում և կարգով այլ անձի կամ անձանց բնակարանների, բնակելի տների կամ բնակելի տարածքների գնման վկայագրերի տրամադրումն արգելվում է՝ բացառությամբ 4-րդ կարգի վթարային շենքերից բնակիչների վերաբնակեցման դեպքերի:».

3) Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 16-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«16. Գույքի գնահատումն իրականացվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքին համապատասխան (բացառությամբ չկառուցապատված հողերի ոչ աճուրդային կարգով օտարման դեպքերի): Գնահատումը պարտադիր է նաև Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ դեպքերում:»:

Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 6-8-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

6. Երևան համայնքի սեփականության 2025 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան համայնքի սեփականության 2025 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

7. Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայական) Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի, 1-ին հարկի, 107.12քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2031 թվականի ապրիլի 1-ը ժամկետով տրամադրել «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպությանը:

8. Ծ. Իսակովի պողոտայի հ.15/31 հասցեում գտնվող՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Արա և Ռոբերտ Խաչատրյաններին պատկանող հողամասը Լեռ Կամսարի փողոցի հ.30/3 հասցեին կից հատվածում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ՝ Արա և Ռոբերտ Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Իսակովի պողոտայի հ.15/31 հասցեում, տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 2868.1քմ մակերեսով

հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.10102022-01-0266 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Լեռ Կամսարի փողոցի հ.30/3 հասցեին կից հատվածում տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող 1158. 21քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

9. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.29/3 հասցեում հասարակական նշանակության շինության՝ ամբուլատոր պոլիկլինիկայի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «ՄԻԲՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 29/3 հասցեում հասարակական նշանակության շինության՝ ամբուլատոր պոլիկլինիկայի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

10. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շերամի փողոց հ.62 հասցեում բազմաֆունկցիոնալ նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «ՎԱՐՍՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շերամի փողոց հ. 62 հասցեում բազմաֆունկցիոնալ նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

11. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հրազդանի կիրճ հ. 4/9 հասցեում սպորտային համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «ԱՍԼԵՆԴ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հրազդանի կիրճ հ. 4/9 հասցեում սպորտային համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

12. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 482-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 482-Ն որոշման 1-ին կետի 18.2-րդ ենթակետից հետո լրացնել նոր 18.3-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.3) Երևան քաղաքի վարչական տարածքում 2000 և ավելի անհատական բնակելի տներ, առանձնատներ, այգետնակներ (ամառանոցներ) ունեցող տարածքների (թաղամասերի) համար նոր կառուցվող գազասպառման համակարգի ստեղծման դեպքում ինժեներական ենթակառուցվածքների (վերգետնյա կամ ստորգետնյա) ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

13. Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

14. Միսաք Մանուշյանի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն հայ բանաստեղծ, ֆրանսիական դիմադրության շարժման մարտիկ Միսաք Մանուշյանի կիսանդրու տեղադրմանը Երևան քաղաքի Միսաք Մանուշյանի անվան պուրակում՝ համաձայն հավելվածի:

15. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող 13 թանգարանային առարկաները 2026 թվականի ապրիլի 15-ից մինչև 2029 թվականի մարտի 15-ը «Հայաստանի գինու պատմության թանգարան» հիմնադրամին ցուցադրության նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

16. Երևան քաղաքում Խաչատուր Ավետիսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 8-րդ փողոցը (սկսվում է Սիլիկյան 2-րդ փողոցից, հասնում՝ Սիլիկյան 7-րդ փողոց) անվանակոչել հայ կոմպոզիտոր, քանոնահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Խաչատուր Ավետիսյանի անվամբ՝ «Խաչատուր Ավետիսյան փողոց»:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 17, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2026 թվականի մարտի 12-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

17. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 9 անդամ.

1. Պեդրո Զարոկյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Արման Բաբաջանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
3. Արշակ Սարգսյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
5. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
6. Մանուկ Սուքիասյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
7. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
8. Սարգիս Տեր-Եսայան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

9. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը և հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 8 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Արման Բարխուդարյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
3. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Սուսաննա Մելիքյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Արևիկ Բլեջյանց - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
6. Գրիգոր Իսկանդարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
7. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
8. Պեդրո Զարոկյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը, «Մայր Հայաստան» խմբակցության անունից՝ Մեսրոպ Մանուկյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից՝ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 483-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 19

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

18. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ–Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 10 անդամ.

1. Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Գրիգոր Իսկանդարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Հայկ Գրիգորյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
5. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

6. Աննա Ավետիսյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
7. Ռոբերտ Ծովյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
8. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
9. Վահան Ավագյան - Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար
10. Սուսաննա Մելիքյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի տեղակալներ՝ Լևոն Հովհաննիսյանը և Սուրեն Գրիգորյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 12 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Միքայել Խաչատրյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
3. Գրիգոր Իսկանդարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Նատալյա Սինորյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
5. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
6. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
7. Հայկ Սահակյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ
8. Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
9. Լուսինե Սարգսյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
10. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
11. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
12. Քրիստինե Վարդանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը, «Հանրապետություն» խմբակցության անունից՝ խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը, «Մայր Հայաստան» խմբակցության անունից՝ խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN 1-6 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

19. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ–Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արմեն Մկրտչյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար
2. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Արամ Թորոսյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանով անցնող Հրազդանի կիրճ փողոցն (սկսվում է Աթենքի փողոցից՝ Հրազդան մարզադաշտի հարևանությամբ, հասնում Հալաբյան փողոց) անվանափոխել լեգենդար խորհրդային ֆուտբոլիստ և մարզիչ, օլիմպիական չեմպիոն, «Արարատ-73»-ի գլխավոր մարզիչ Նիկիտա Սիմոնյանի անվամբ՝ «քաղաք Երևան, Նիկիտա Սիմոնյան փողոց»:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

20. Երևանի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևանի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ–Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Իոսիֆ Կուբատյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Արմեն Քոչարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը, շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար
2. Մանուկ Սուքիասյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
3. Արամ Թորոսյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը և քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N 405-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 5-րդ կետում «քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունը,» բառերը փոխարինել «շինարարության և բարեկարգման, քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունները,» բառերով.

2) 7-րդ կետի 12-րդ ենթակետի «է» պարբերությունում «հատվածները,» բառից հետո լրացնել «, ապահովել խրամուղու ամբողջ երկայնքով վերականգնվող հատվածի առանց շեղումների՝ մեկ ընդհանուր և ուղիղ եզրագիծ, ճանապարհի երթևեկելի գոտու կամ մայթի տվյալ հատվածի ասֆալտ-բետոնյա նոր ծածկի ստեղծում,» բառերը.

3) 7-րդ կետի 12-րդ ենթակետի «ը» պարբերությունում «խճաձածկի» բառից հետո լրացնել «(խճաձածկը ամբողջությամբ պետք է պատված լինի բիտումային էմուլսիայով)» բառերը.

4) 7-րդ կետի 12-րդ ենթակետի «ժդ» պարբերությունում «50» թիվը փոխարինել «5» թվով, իսկ «100» թիվը «10» թվով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը